ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Democracy Development Foundation

Շվեդիա Sverige

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2023 ԹԹ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023

Հեղինակներ՝ Մարիետա Թեմուրյան
Սառա Ղազարյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շնորհակալություն է հայտնում Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալությանը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին՝ այս հրապարակումը հնարավոր դարձնելու համար: Տեղեկանքում ներկայացված տեսակետները և վերլուծությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն նշված կազմակերպությունների տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ներածություն

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը սանձազերծեց լայնածավալ պատերազմ Արցախի դեմ: 44 օր տևած պատերազմում, համաձայն ՀՀ քննչական կոմիտեի 2021 թ. սեպտեմբերի 27-ի տեղեկության, զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց ընդհանուր թիվը 3781 էր: Պատերազմից հետո 2021 թ. փետրվարի 4-ին ՀՀ կառավարությունը թիվ 131-Ն որոշմամբ հաստատեց Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման կարգը:

2021 թ. հունիսի 1-ից մեկնարկած հանրության հոգեբանական վերականգնմանն ուղղված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից այն ժամանակ Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվել էր 100 մլն դրամ, Ծրագրում ներգրավվել էին 60 հոգեբաններ: 6 ամիս տևողությամբ Ծրագիրը պետության կողմից իրականացված առաջին համակարգված աշխատանքն էր՝ ուղղված հանրության հոգեբանական վերականգնմանը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2021 թ. գնահատել էր պատերազմի մասնակիցների և հանրության հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը: Համաձայն գնահատման արդյունքների՝ Ծրագրով բավարարվել է պատերազմին անմիջապես առնչություն ունեցող անձանց նվազագույն կարիքի միայն 6.4 տոկոսը:

Այս ցուցանիշն արդեն վկայում է, որ 44 օրյա պատերազմի հոգեբանական հետևանքները վերացնելուն ուղղված պետության նախաձեռնած միջոցառումների ծավալը բավարար չի եղել և անհրաժեշտ էր համակարգված շարունակական գործողությունների իրականացում: Վերոնշյալն էին փաստում նաև իրականացնողները: Այնուհանդերձ 2021 թ. դեկտեմբերին ավարտված Ծրագիրը չունեցավ շարունակություն: Արդյունքում համակարգը կրկին պատրաստ չէր արձագանքելու ո՛չ 2022 թ. սեպտեմբերին Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիայի հետևանքով առաջացած և ո՛չ էլ 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված անձանց հոգեբանական աջակցության կարիքներին:

Սույն տեղեկանքը ներկայացնում է 2022-2023 թթ. ընթացքում պատերազմի մասնակիցների, ինչպես նաև հանրության հոգեբանական վերականգնման ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցառումները: Տեղեկանքի կազմման նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ կառավարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, հոգեբուժական հաստատություններ, ինչպես նաև ուսումնասիրվել է զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները:

2020 թ. 44 օրյա պատերազմին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման աշխատանքները Ծրագրի իրականացումից հետո

Պատերազմական գործողությունների մասնակիցները և/կամ ականատեսները բախվում են ֆիզիկական և հոգեբանական տրավմաների, ինչի հետևանքով նրանց մոտ զարգանում են հետտրավմատիկ սթրեսային խանգարում, դեպրեսիա, տագնապայնություն և այլ հոգեբանական խնդիրներ:

Մասնագետների գնահատմամբ՝ պատերազմը այն հիմնական գործոնն է, որի ազդեցությամբ Հայաստանում աճել են հոգեկան խանգարումները, հոգեբանական խնդիրները:

Ըստ հոգեբույժների՝ ժամանակին և գրագետ հոգեբանական աջակցությունը հնարավորություն է խուսափելու առկա հոգեբանական խնդիրների խրոնիզացիայից (երկարատև ընթացք ունեցող տագնապայնությունը, դեպրեսիան և հետտրավմատիկ սթրեսային խանգարումը հոգեբանական աջակցություն չցուցաբերելու պայմաններում հանգեցնում է անձի անվերադարձ ախտաբանական փոփոխությունների):

Նման պարագայում անհասկանալի է պետության կողմից պատերազմի հետևանքով հոգեկան խանգարումների և հոգեբանական խնդիրների պատշաճ և պարտադիր վիճակագրություն չվարելը: Այնուամենայնիվ, նույնիսկ վիճակագրական տվյալների բացակայության դեպքում խնդրի օրակարգային լինելն ակնառու է: Օրինակ՝ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում, 2020 թ. 44 օրյա պատերազմից հետո ստացիոնար բուժում է ստացել պատերազմի 57 մասնակից և պատերազմի մասնակիցների 3 հարազատ: Գյումրու հոգեկան առողջության կենտրոն 2020 թ.-ին դիմած 60 անձանց 43 տոկոսը (23 վիրավորում ստացած անձ, 3 զոհվածի ծնող) անմիջական առնչություն են ունեցել պատերազմին:

2022 թ. տվյալներով՝ արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում հայկական կողմը ունեցել է 3788 զոհ, 1494 քաղաքացու հաշմանդամության խումբ է սահմանվել: Վերին և ստորին վերջույթների տարբեր մակարդակներում անդամահատվել է 137 անձ, տեսողական խնդիրներով հաշմանդամություն է ձեռք բերել 106 անձ, որոնցից 11-ն ամբողջությամբ կորցրել է տեսողությունը: Այս տվյալները ևս փաստում են պատերազմին մասնակից անձանց հոգեբանական վերականգնման կարիքը:

Մասնագետներն ահազանգում են նաև թմրամիջոցներից և այլ կախվածությունների աճի մասին: Ունենք ցուցանիշ, ըստ որի պատերազմից հետո սթրեսի հաղթահարման վնասակար մեթոդների կիրառելիությունը՝ թմրանյութեր, ծխախոտ, դեղորայքի միջոցով հանդարտեցում, շուրջ 4,5 անգամ աճել է:

Նշենք, որ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրականացրած՝ թմրամիջոցների ոլորտի քաղաքականության գնահատման արդյունքները նույնպես մտահոգիչ են: Մասնավորապես, 2021 թ. թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի հատկանիշներով հանցագործությունների թիվը 2020 թ. համեմատ աճել է 23.4 տոկոսով, իսկ 2022 թ.-

ին՝ 101 տոկոսով: Հանցագործությունների թվի աճին զուգահեռ աճել է նաև պատասխանատվության ենթարկված անձանց թիվը (2021 թ.՝ 595 անձ, 2022 թ.՝ 754 անձ):

Ուշադրության է արժանի նաև պատասխանատվության ենթարկված անձանց տարիքային բնութագիրը: Մասնավորապես 2022 թ.-ին պատասխանատվության ենթարկված 18-29 տարեկան անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 74 տոկոսով: Ընդ որում 18-24 տարեկան անձանց թիվն աճել է 80 տոկոսով, իսկ 25-29 տարեկան անձանց թիվը՝ 71 տոկոսով: Այս տարիքային խմբում են 2020 թ. պատերազմի մասնակիցները, այդ տարի և դրանից հետո զինված ուժերում ծառայածները: Այսինքն, կարող ենք առնվազն ենթադրություն անել, որ պատերազմի հոգեբանական ազդեցության անտեսումը, և պատերազմի մասնակիցների ու նրանց հարազատների համար հոգեբանական աջակցության միջոցառումների նախ ոչ պատշաճ իրականացումը, իսկ այնուհետև առհասարակ դրանց բացակայությունը հանգեցնում են այդ անձանց մոտ կախվածությունների առաջացմանը, ինչպես նաև, որպես հետևանք, հանցագործությունների աճին:

Եթե նկատի ունենանք, որ լայն տարածում են ստացել ու հեշտ հասանելի են սինթետիկ թմրանյութերը, որոնք անգամ մեկ օգտագործման դեպքում առաջացնում են հոգեբանական կախվածություն, հոգեբանական համակարգային աջակցության հրատապությունը առավել օրակարգային է դառնում:

Բացի դրանից՝ 2023 թ. սեպտեմբերյան ռազմական ագրեսիայի հետևանքով 100 հազարից ավել մարդ, այդ թվում 30 հազար երեխա բռնի տեղահանվել է: ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակն ահազանգում է, որ Հայաստանում ապաստանած արցախցի երեխաների մոտ նկատվում են սուր հոգեբանական սթրեսի նշաններ. առանց անհապաղ աջակցության նրանց հոգեկան առողջությունը կարող է վատթարանալ:

Կարիքի մասին են բարձրաձայնում տեղահանված անձինք նաև

«Հոգեբանական աշխատանք, իհարկե կուզեմ. ինչպես խոսել երեխաների հետ, ինչպես շփվել, որ ինչքան բան տեսել են, էտ սթրեսից դուրս գան»:

Պետական կառույցներն ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մոբիլիզացվել են պատերազմական օրերին, ինչպես օրինակ 2022 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների կամ 2023 թ. սեպտեմբերին արցախցիների բռնի տեղահանման ժամանակ, սակայն դրանք շարունակական ու համակարգված չեն:

Այս ամենի համատեքստում խնդրահարույց է գերատեսչությունների վերաբերմունքը խնդրին: Պատերազմի մասնակիցների և հանրության հոգեբանական վերականգմանն ուղղված ծրագրի շարունակականության ապահովման կամ այլ ծրագրի նախագծման վերաբերյալ կազմակերպության հարցմանը ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը տեղեկացրել է, որ առնչություն և տեղեկատվություն չունի, քանի որ վերը նշված ծրագիրն իրականացվել է «հայտարարված մրցույթը հաղթած հոգեբանական

առողջության «Կոնսորցիում»-ի կողմից»: Նշենք, որ հոգեբանական վերականգնման 6-ամսյա ծրագրի համակարգողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն էր: Ըստ այդմ, կարող ենք փաստել, որ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը չի տիրապետում իր ենթակայության տակ գտնվող տեղեկատվությանը: Նշենք, որ Կազմակերպության ճշգրտող հարցումն այն ուղարկելուց 16 օր հետո է վերահասցեագրվել ՀՀ ներքին գործերի նախարարությանը և դեկտեմբերի 27-ի դրությամբ (23 օր անց) պատասխան դեռ չի ստացվել:

Եզրակացություն

Այսպիսով, ՀՀ իշխանությունները 2021 թ. նախաձեռնեցին պատերազմի հոգեբանական հետևանքները թիրախավորող ծրագիր, որը սակայն բավարար չէր անհրաժեշտ արդյունքի համար: Այն պատշաճ ծավալով չի իրականացվել, բոլոր թիրախային խմբերին չի ընդգրկել:

Ծրագրի իրականացումից հետո չի ապահովվել նաև կարիքների պատշաճ գնահատումը և երկու տարվա ընթացքում պետության կողմից Ծրագիրը շարունակելու ուղղությամբ առարկայական քայլեր չեն իրականացվել: Ավելին՝ Ներքին գործերի նախարարությունը չի տիրապետում իր կողմից համակարգված ծրագրի վերաբերյալ տեղեկությանը, իսկ հարցումներին գերատեսչությունները ժամանակին և պատշաճ չեն պատասխանում: Սա վկայում է, որ հանրության հոգեբանական վերականգնմանն անհրաժեշտ կարևորություն չի տրվում՝ չնայած խնդրի արդիականությանը, մասնագետների կողմից՝ խնդրին պատշաճ և ժամանակին չարձագանքելու դեպքում անդառնալի հետևանքների մասին ահազանգերին: